

Ֆոկուս-խմբերի օգնությամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության արդյունքների վերլուծություն

28.01.2017թ.

Հասարակական կարծիքի հարցումները ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում աստիճանաբար ձեռք են բերում առօրյա բնույթ: Դրանք վերաբերում են բուհական կրթության կազմակերպման ամենատարբեր հիմնահարցերի. ստացած կրթությունից ուսանողների բավարարվածությանը, պրակտիկաների կազմակերպման արդյունավետությանը, գնահատման համակարգի օպտիմալությանը, բուհ-գործատու կապի արդյունավետությանը, առկա ռեսուրսներից ու ծառայություններից պրոֆեսորա-դասախոսական ու սպասարկող անձնակազմերի բավարարվածությանը և այլն: Տվյալ խնդիրների վերաբերյալ *Մասնագիտական կրթության որակի ապահովման* (ՄԿՈԱ) բաժնի կողմից վերջին 4-5 տարիներին մասնաճյուղում անցկացված հարցումների արդյունքները հաշվետվության տեսքով ներկայացվել է ուսանողական և դասախոսական հանրությանը, ստացված հետևություններն ու կատարված առաջարկությունները քննարկվել են տարբեր մակարդակներում, նախանշվել են առօրյա աշխատանքում դրանց կիրառման հնարավորությունները: Ի թիվս այլ հետևությունների, մասնաճյուղի ղեկավարությունը, որը նման հարցումների պատվիրատուն է և գործնականում կիրառելի արդյունքն էրի պահանջատերը, հարց է դրել զուգահեռաբար կատարելագործել ուսումնասիրությունների մասնագիտական հիմնավորվածությունը, ստանալ ավելի բազմակողմանի ու հավաստի տվյալներ:

Մյուս կողմից հանրապետության կրթական համակարգի ու Մայր բուհի զարգացումների համատեքստում մասնաճյուղում գործընթացներ են ընթանում «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ինստիտուտի կայացման ուղղությամբ: Թերևս նրա գլխավոր իմաստներից մեկն այն է, որ առկա տնտեսա-քաղաքական ու սոցիալ-մշակութային իրողությունների պայմաններում.

- ավելի արդյունավետ գործի մասնագիտական պատրաստության համակարգը,
- օպտիմալացվի ուսումնական պլանների տարբեր բլոկների փոխկապվածությունն ու փոխպայմանավորվածությունը,
- ճշգրտվեն ու կատարելագործվեն առարկայական ծրագրերը,
- ավելի մեծ ուշադրություն դարձվի գիտելիքների գործնական կիրառության խնդիրներին,
- ավելի սերտ ու փոխշահավետ դառնա բուհ-գործատու կապը,
- նորովի լուծվեն ուսումնա-արտադրական պրակտիկաների ու շրջանավարտների աշխատանքի տեղավորման խնդիրները,
- գիտելիքների ու հմտությունների յուրացման, դրանք գործնականորեն կիրառելու խնդրում ներկա պահանջներին համապատասխան կարևորվեն

դասախոսների անձնական ու մասնագիտա-մանկավարժական որակները, դասախոս-ուսանող, ուսանող-ուսանող միջանձնային հարաբերությունները:

Ահա, նախորդ հարցումներից ստացված հետևությունների ճշգրտման, «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ինստիտուտի կայացման համատեքստում ուսանողության կարծիք-գնահատականները կարելվույն հաշվի առնելու նպատակով Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից 2016 թվականի նոյեմբեր-2017 թվականի հունվար ամիսներին բոլոր մասնագիտությունների բարձր կուրսերի (հիմնականում 4-րդ կուրսի) ուսանողների շրջանում անց է կացվել հարցում՝ **Խմբային բանավեճի** կամ, այսպես կոչված **«Ֆոկուս-խմբի»** մեթոդով: Որպես «Որակական սոցիոլոգիայի» հետազոտական մեթոդ սա խմբերի կողմից հիմնահարցի, իրադարձության, երևույթների ըմբռնման տարբերությունները բացահայտելու եղանակ է: Մեթոդը լայնորեն կիրառվում է մարքեթինգային հետազոտություններում, գնողական պահանջարկի, վարվող քաղաքականության հանդեպ վերաբերմունքի, կրթական բարեփոխումների արդյունավետության գնահատման և այլ ուսումնասիրություններում:

Որպես կանոն ընտրվում են քննարկվող խնդիրներին տեղյակ, շահախնդիր 6-8 փորձագետ-ուսանողներ, որոնց հետ, հնարավորինս հարմար ու անկաշկանդ գրույց թույլատրող սենյակային պայմաններում մասնագետն անց է կացնում քննարկումը: Հետազոտողը կամ աշխատակիցը վարում են բանավեճը, ինչը գրանցվում է և հետագայում վերլուծվում: Լավագույն դեպքում այն տեսագրվում և ձայնագրվում է, որը հետագայում յուրովի վերծանվում է իր բոլոր նրբերանգներով: Հազվադեպ չեն դեպքերը, երբ շարժումների ու առոգանության մեջ արհեստավարժ մասնագետը խնդրո առարկայի վերաբերյալ որսում է «լրացուցիչ» տեղեկություն: Քանի որ «որակական» հետազոտությունն ուղղված է մարդկանց առօրյա կյանքին, այն կարծես հիշեցնում է լրագրողի աշխատանք: Սակայն միայն արհեստավարժ սոցիոլոգը կարող է այնքան պատրաստված լինել, որ կենդանի իրողությունը ձևակերպի տեսական տերմիններով: Այդ պատճառով հետազոտության ընթացքում նա պարտավոր է հետևել որոշակի տրամաբանության և պահպանել գիտական մոտեցման կանոնները:

Քանակական հետազոտության մեջ սոցիոլոգը դաշտ է դուրս գալիս «զինված» հայեցակարգով, վարկածներով և չափիչ գործիքներով: Իսկ **որակական հետազոտության** դեպքում՝ նա «անզեն է», սակայն պատրաստված՝ նախկին սոցիալական փորձով, խնդիրների մասին նախնական գիտելիքներով: **Որակական մեթոդը** նյութական քիչ ծախսեր է պահանջում, սակայն մտավոր ծախսերն ահռելի են: Սոցիոլոգն այստեղ պետք է դրսևորի մասնագիտական և համամշակութային գիտելիքների լայն պաշար և տեղեկատվական տարբեր աղբյուրների համադրման կարողություն, վերացականը և կոնկրետը զուգակցելու ունակություն, գրուցավարի, սոցիալական հոգեբույժի և վերլուծաբանի գործառույթների զուգակցման հմտություն, օժտված լինի գիտական ինտուիցիայով և երևակայությամբ, ողջախոհությամբ և

արտածական տրամաբանությամբ: Թերևս իզուր չի ասված. Սոցիոլոգ-«որակաբան» լինելը արվեստ է: Այստեղ կարծես անձի մեջ խտացված է մի ողջ ստեղծագործական խումբ:

Քանի որ սա առաջին փորձերից մեկն է և մեր ռեսուրսները տվյալ պահին եղել են սահմանափակ, բավարարվել ենք նրանով, որ բոլոր մասնագիտությունների բարձր կուրսեցիներից ընտրել ենք տեղյակ ու առաջադիմող, ընդհանուր կրթական խնդիրներով հետաքրքրվող ուսանողական խմբեր, որոնց հետ անց է կացվել զրույց՝ 2-3 ժամվա ընթացքում, այն գրանցվել է թղթի վրա ու հետագայում ենթարկվել է տեքստային վերլուծության: Նման աշխատանքների մեջ կարևորագույն նշանակություն ունի մասնակցության կամավորությունը և փորձագետների հնարավորինս լիարժեք իրազեկվածությունն ու ինքնուրույն կարծիքի (տեսակետի) առկայությունը: Պահանջներ, որոնք փորձել ենք կարելվույն բավարարել: Նախապես երկու անգամ բոլոր մասնագիտությունների բարձր կուրսի մի շարք ուսանողների (հետագա հնարավոր փորձագետների), ֆակուլտետային ուսանողական խորհուրդների ներկայացուցիչների հետ անց է կացվել ծանոթագրական հանդիպում, որի ընթացքում պարզաբանվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, «ֆոկուս-խմբերի» մեթոդով ուսումնասիրության յուրահատկությունները, մասնակիցների ու հետազոտողի պարտականությունները, համատեղ զրույց-քննարկումների մշակույթը: Ընդամենը խնդիրն այն էր, որ օբյեկտիվորեն իրենք անտեղյակ էին քննարկվող որոշ հարցերի մասին, դրա համար էլ նրանց պատասխանները վերլուծվել են որոշակի վերապահումով:

Նշենք, որ քննարկվող հարցերն այնպես էին պատրաստված, որ ապահովվեր նախորդ հարցումների հետ որոշակի ժառանգականությունը՝ տվյալների համեմատելիության նպատակով, ինչպես նաև շոշափվեր «Կրթական ծրագրի ինստիտուտի»-ն վերաբերվող խնդիրները: Մասնավորաբար **քննարկման էր դրված**.

- ձեռք բերվող մասնագիտության էության ու բովանդակության, նրա ապագա աշխատանքային ոլորտների վերաբերյալ իրազեկվածության, ուսումնական պլանների, նրա առանձին բլոկների, առարկայական ծրագրերի փոխկապվածության, փոխլրացնելիության կամ կրկնելիության հարցերը,
- գիտելիքների ու հմտությունների արդյունավետ յուրացման գործում դասախոսի անձի, միջուսանողական հարաբերությունների դերը,
- խորհրդատվական ծառայությունների աշխատանքի արդյունավետությունը,
- կարիերայի կենտրոնի, ուսանողական խորհրդի աշխատանքների նպատակաուղղվածությունն ու օգտակարությունը,
- գնահատման համակարգի արդյունավետությունը, գնահատականների օբյեկտիվության աստիճանը,
- պրակտիկաների արդյունավետ անցկացման հետ կապված խնդիրները:

Քանի որ մի շարք մասնագիտությունների ավարտական կուրսի ուսանողներն ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաներն անց են կացնում 2017թ. փետրվարին, տվյալ հարցի հետ կապված պատասխաններն ու գնահատականները որոշակի իմաստով կցկտուր են ու ոչ լիարժեք: Պրակտիկաներից հետո նորից հանդիպելու ենք խմբերի հետ և քննարկումներից հետո հաշվետվությունը փոխլրացվելու է ճշգրտված ու ավելի լիարժեք տեղեկություններով:

Այժմ ընդհանրացված տեսքով ներկայացնենք քննարկումների արդյունքներն ու դրանց վերլուծությունը:

Ինչպես վերը նշել ենք, որպեսզի հնարավոր լինի «ֆոկուս-խմբերից» ստացած տվյալները համեմատել ՄԿՈԱ բաժնի նախորդ մի շարք հարցումներից ստացված արդյունքների հետ, ապահովվել են այդ հարցումների հարցաշարերի որոշակի ժառանգելիություն և մեր փորձագետների հետ քննարկվել է նաև ուսումնականակերպչական ու վարչական ռեսուրսներից ուսանողների բավարարվածությունը (խորհրդատվական ծառայությունների, ուսխորհրդի, կարիերայի կենտրոնի գործունեության, պրակտիկաների արդյունավետության վերաբերյալ կարծիքները): Փաստենք, որ ընդհանուր հետևությունները սոցիալ-վիճակագրական իմաստով լիովին համադրելի են նախորդ հարցումներից ստացված եզրակացությունների հետ:

Հակիրճ դրանք հանգում են հետևյալին:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կայացած ու ղինամիկորեն զարգացող բարձրագույն կրթօջախ է, որը պատվով է կրում իր առաքելությունը և անկախ պետականության 25-ամյա պատմության մեջ տարածաշրջանի ազգաբնակչության ու իշխանությունների գլխավոր ձեռքբերումներից ու հպարտություններից մեկն է, մայր բուհի արժանի մասնիկն ու կրթագիտական նվաճումների ժառանգորդը, ձեռքբերում, որը հավակնում է դառնալ (եթե արդեն չի դարձել) Տավուշի մարզի գիտամշակութային հարստություն-խորհրդանիշերից:

1. Ընդհանուր առմամբ փորձագետների գերակշիռ մասն այն հստակ համոզմանն է, որ մասնաճյուղի ղեկավարությունն ու պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը աշխատում են արդյունավետորեն, կարգապահությունը թե՛ լսարաններում, և թե՛ արտալսարանային համալսարանական միջավայրում պատշաճ մակարդակի է, ուսումնականակերպչական ստորաբաժանումները հստակ իրագործում են իրենց պարտավորությունները: Նրանք իրենց գոհունակություն արտահայտեցին ինչպես խորհրդատվական ծառայությունների աշխատանքի (գրեթե բոլոր դեկանատների, ամբիոնների գերակշիռ մասի աշխատանքները փորձագետները գնահատեցին շատ բարձր), այնպես էլ գրադարանի աշխատակիցների, սպասարկող անձնակազմի, մասնաճյուղի էլեկտրոնային կայք-էջի վերաբերյալ բոլոր այն դեպքերում, երբ հարկ է եղել դիմել նրանց օգնությանը: Այս ամենի շնորհիվ էլ փորձագետների հասարակական

գիտակցության մեջ իշխում է այն համոզումը, որ ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսագործական գիտելիքներն ու մասնագիտական հմտություններն անհրաժեշտ որակի են: Փորձագետների գերակշիռ մասն ընդհանուր գոհունակություն հայտնեց նաև դասախոսների ու կրթության կազմակերպիչների կողմից իրենց ջանքերի գնահատման արդարացիությունից:

2. «Ֆոկուս-խմբերի» հետ քննարկումներում տարբեր մասնագիտությունների փորձագետների կողմից մասնակիորեն հաստատվեցին նաև մի շարք այնպիսի խնդիրներ, որոնք վիճակագրորեն ամրագրվել էին ՄԿՈՒ Բաժնի կողմից նախորդ տարիներին անցկացված հարցումներում: Մասնավորաբար, դա վերաբերվում է մասնաճյուղի Ուսանողական խորհրդի, Կարիերայի կենտրոնի, Ուսանողների իրավունքը պաշտպանող հանձնաժողովի գոյության ու գործունեության մասին լիարժեք իրազեկվածությանը: Եղան ուսանողներ, որոնք տեղյակ չեն Կարիերայի կենտրոնի, Ուսանողների իրավունքները պաշտպանող հանձնաժողովի գոյության մասին (ելնելով «անմեղության կանխավարկածից» հեռու ենք այն մտքից, թե ուսանողը տեղյակ է, բայց ասում է չգիտեմ), կամ՝ եթե իմացել են, չգիտեն ինչպես օգտվել նրանց ծառայություններից: Իհարկե, շատերին ուղղակի անհրաժեշտ չի եղել և դա բնական է, այդ պատճառով նման հարցերով չեն հետաքրքրվել: Առանձին փորձագետներ դժգոհություն հայտնեցին ֆակուլտետային ուսանողական խորհուրդ-մասնաճյուղի ուսանողական խորհուրդ համագործակցությունից, նշեցին «պատահական» անձանց գոյությունը ուսանողական կառույցներում, դեպքեր, երբ առաջարկությունները հակազդվում են ծաղրանքով (դա մարդու «մեջքը կոտրում է», խոստովանեց պատմաբան փորձագետներից մեկը): Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ ուսանողական հանրության որոշակի մասը, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով բավարար չափով իրազեկված չէ իր ուսման, սպազա գործունեության համար կարևոր մի շարք կառույցների գործունեության, նրանց հնարավորությունների մասին: Խնդիր, որը հնարավոր է լուծել տվյալ կառույցի ու ֆակուլտետ-ամբիոն համակարգի փոխհամաձայնեցված համագործակցության միջոցով:

3. Մյուս հարցումներից ստացված տվյալների հետ բավարար համահունչ էին նաև պրակտիկայի քննարկումներում հնչած կարծիքները:

Նախորդ տարիներին շրջանավարտների ու պրակտիկա անցած ուսանողների շրջանում անցկացված հարցումներում ուսանողների մի մասը կարծիք էր հայտնել, թե պրակտիկայի տևողություններն ու անցկացման ժամնակահատվածը կարիք ունեն օպտիմալացման: Ավելի արդյունավետ դարձնելու անհրաժեշտություն ունեն նաև պրակտիկանտ-պրակտիկայի ղեկավար, պրակտիկանտ-խորհրդատու (պրակտիկայի անցկացման վայրից) հարաբերությունները: Հիշեցնենք, որ պրակտիկայի վերաբերյալ մեր քննարկումների արդյունքները փոխլրացվելու են փետրվար ամսին պրակտիկա անցնողների վերադարձից հետո:

- **«Հոգեբանություն»** մասնագիտության փորձագետները մեկը մյուսին փոխարացնելով նշում էին, թե քաղաքի համեմատ գյուղերում ավելի լավ էր պրակտիկան անցնում: Այսպիսի կարծիքներ արտահայտվեցին. «մեզ լիարժեք չեն բացատրել, թե ինչ է պրակտիկան, չկա միասնական ըմբռնում», «վերահսկողությունը, հատկապես դպրոցների կողմից թույլ էր», «դպրոցում կային ուսուցիչներ, որոնք մեզ ապակողմնորոշում էին, չէին հասկանում հոգեբանի յուրահատկությունները», «ցանկանում ենք դաս պարապել, չեն թողնում՝ հավանաբար խանդի, նախանձի զգացողությունից ելնելով», «ուսուցիչներն ու դպրոցի ղեկավարությունը լուրջ չէին վերաբերվում»:
- **«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»** մասնագիտության ուսանողները գտնում են, որ իրենց պրակտիկան միայն դպրոցում անցկացնելը բավարար չէ, ցանկալի է, որ քոմպյուտերներով էլ աշխատեն, գնան բանկերը:
- **«Քարտեզագրություն և կադաստրային գործ»** մասնագիտության փորձագետը, գոհունակություն հայտնելով առաջին կուրսում անցկացված պրակտիկայից, տապալված համարեց երկրորդ կուրսի պրակտիկան այն պատճառով, որ այն անց է կացվել քննաշրջանի ընթացքում:
- **«Պատմություն»** մասնագիտության փորձագետները գոհ էին պրակտիկայից, միաժամանակ նշվեց, որ վերահսկողությունն ավելի արդյունավետ կլիներ, եթե պրակտիկայի վայրերը մոտ լինեին;
- **Կիրառական արվեստի** ապագա մասնագետները հիմնականում գոհունակություն հայտնեցին: Միաժամանակ ցանկացան, որպեսզի պրակտիկայի վայրի վերաբերյալ նախօրոք ավելի լիարժեք տեղեկություն տրվի կազմակերպիչների կողմից, ունենան նաև մանկավարժական պրակտիկա (օրինակ՝ դասավանդեն «Գեղագիտություն»): Հատկանշական է, որ դժգոհություն հայտնվեց ցածր առաջադիմությամբ ուսանողներից. Նրանք պրակտիկան ժամանց են ընկալում ու նման վերաբերմունքը բացասաբար է անդրադառնում իրենց տրամադրության վրա:
- **«Տեսեսագիտության տեսություն»** մասնագիտության փորձագետները գոհ են կազմակերպումից, միայն նշեցին. «գնացել ենք բանկ, բայց «Բանկային գործ» առարկան հետո ենք անցել», եթե «ավելորդ» առարկաները դուրս գան, հարցը կլուծվի:

4. Համառոտակի նշենք **գնահատման համակարգի վերաբերյալ** առանձին մասնագիտությունների փորձագետների կողմից հնչեցրած կարծիքներն ու տեսակետները.

- **Ֆրանսերեն լեզու և գրականություն** – «Ընթացիկ քննությունների ժամանակ դասի գալը խանգարում է»;

- **Անզերեն լեզու և գրականություն**- «Ամեն ինչ բնականոն է ու հարմար, հիմնականում օբյեկտիվ ենք գնահատվում, միայն երբեմն անհասկանալի է, որ ողջ կիսամյակում պատասխանել ես, դրական գնահատվել ու հանկարծ, արդյունքում՝ բացասական ես գնահատվում»;

- **Հայոց լեզու և գրականություն**- «Թեսթերը գիտելիքները համարժեք չեն գնահատում»: Նմանօրինակ գնահատական հնչեցրին նաև Կիրառական արվեստ մասնագիտության փորձագետները:

- **Պատմություն**- «Թեսթերին դեմ չենք, սակայն բանավոր հարցումները մեր տեսանկյունից ավելի օբյեկտիվ են; Ճիշտ կլինի, եթե սեմինարների պատասխանները հաշվի առնվեն ընդհանուր գնահատականի մեջ; օբյեկտիվությունը նվազում է, եթե դասախոսը նայում է ստուգման գրքույկին ու գնահատում»:

- **Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա**- «Հումանիտար առարկաները ցանկալի է, որ ստուգարքով ավարտվեն; լինում են դեպքեր, երբ դասախոսը չի կարողանում լիարժեքորեն բացահայտել ուսանողի գիտելիքները; մեզ վրա վատ են ազդում միջնորդությունների դեպքերը»:

- **Հոգեբանություն**- «Բացակաների համար երբեմն անարդար են գնահատականն իջեցնում; գնահատման մեջ սուբյեկտիվության տարրերը հատկապես մեզ վրա շատ են ազդում, հիվանդագին ենք ընկալում»:

Մեջբերված կարծիքները, քննարկումներում հնչեցրած ցանկություններն ու դիտողություններն ընդհանրացնելով կարող ենք ասել, որ մեր փորձագետները **դրականորեն գնահատելով մասնաճյուղում գործող գնահատման համակարգը**, միաժամանակ կարևորում են **գնահատման հնարավորինս տարբերակված մոդելների կիրառվումը** (հաշվի առնելով մասնագիտությունների յուրահատկությունները) և **գնահատականի վրա սուբյեկտի գործոնի ազդեցության նվազեցումը**:

Այժմ քննարկենք մի շարք այնպիսի հարցեր, որոնք ՄԿՈԱ բաժնի նախորդ հարցումներում չեն շոշափվել, սակայն մեր կարծիքով սերտորեն առնչվում են «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ինստիտուտի գործունեության հետ:

5. **Մասնագիտության գիտակցական ընտրությունը** դեռևս դպրոցական հասակից, նրա հնարավորությունների իմացությունը և դրանց ներդաշնակությունը երիտասարդի կենսական պլանների հետ, ուսման հանդեպ ակտիվ ու դրական վերաբերմունքի կարևոր գործոններից է: Եթե այն զուգակցվում է նաև աշխարհայացքային այնպիսի տարրերի հետ, ինչպիսին պետականամետությունն է ու ազգասիրությունը, որպես բարոյական սկզբունքներ, ապա արդեն ձեռք է բերում նաև ազգա-պետական իմաստ և նշանակություն: Այդ պատճառով էլ **մասնագիտական կողմնորոշումը**, այն ապահովող

ինստիտուտների գործունեությունը երրորդ հանրապետության ներկա զարգացումներում ձեռք է բերում առանձնակի իմաստ և նշանակություն:

Սույն համատեքստում մեզ հետաքրքրում էր, թե մասնաճյուղի բարձր կուրսի ուսանողները որքանով հստակ են պատկերացնում իրենց մասնագիտությունը, կենսագրության ո՞ր փուլում և ու՞մ միջոցով են այդ իմացությունները ձևավորել, ի սկզբանե հետաքրքրվե՞լ են արդյոք բակալավրական կրթական ծրագրերի բովանդակությամբ, ուսման ընթացքում անցնելիք առարկայացանկով, որքանով է այն հարիր իրենց սպասումներին: Այնուհետև ուսանողական տարիների ընթացքում, երբ արդեն առարկաների մեծ մասը նախանշված ծրագրով դասավանդվել են, եղե՞լ են արդյոք առարկաների կամ առարկայական ծրագրերի թեմատիկաների կրկնություններ, որքանով են դրանք արդարացված ու հիմնավորված, ինչպե՞ս են տեսնում ուսումնական պլանների կատարելագործումը:

5.1. Նախ որպես օբյեկտիվ փաստ նշենք, որ մասնաճյուղի կայքում ի սկզբանե (կայքը գործում է 2011 թվականից) դրված է և պարբերաբար, եթե կատարվում են փոփոխություններ, նորացվում է մասնագիտական կրթության տեղեկագիրք բաժինը, որտեղ մանրակրկիտ ու հստակ ներկայացված են ուսումնական պլանների բլոկները իրենց առարկայացանկով, յուրաքանչյուր առարկայի նպատակի ու վերջնարդյունքների վերաբերյալ անհրաժեշտ ու հիմնավորված տեղեկությունները, տվյալ մասնագիտության միջոցով հնարավոր գործունեության բնագավառները՝ համապատասխան կարգավիճակներով և այլն: Այսինքն, օբյեկտիվորեն, բավարար պատասխանատվության զգացողության և ուսանողական ակտիվության դեպքում մասնաճյուղի ցանկացած ուսանողին մատչելի են նման տեղեկությունները: Փաստենք նաև, որ կան մասնագիտություններ, որոնց ուսումնական պլաններում ընդգրկված չէ «Մասնագիտական ներածություն» առարկան (Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա; Պատմություն; Օտար լեզուներ): Մնացած բոլոր մասնագիտություններում, երբեմն նմանօրինակ անվանումներով, տվյալ դասընթացը առկա է «Մասնագիտության կրթական ծրագրում»:

5.2. Մեր «փորձագետների» գերակշիռ մասը, ազնվաբար և ճշգրտորեն նշեցին ինչպես մասնագիտության վերաբերյալ համարժեք տեղեկությունների իմացությունն ու չիմացությունը, այնպես էլ ուսումնական պլանների վերաբերյալ չիմացության օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները: Սա մենք էապես ենք կարևորում, քանի որ կիրառական սոցիոլոգիայում առանցքային նշանակություն ունի ինֆորմացիայի հավաստիությունն ու հուսալիությունը, որը շատ ավելի է հսկվում օբյեկտիվ ինֆորմացիայի առկայության դեպքում, ինչը, ինչպես վերը նշվեց, մեզ մոտ առկա էր: Դա նաև կատարեց «գտիչ» հարցի դեր ու վստահություն ներշնչեց այն առումով, թե ստացված տեղեկություններն իրոք «փորձագետների» անկեղծ պատասխանների արդյունք են: Նույն իմաստով մենք ընկալեցինք առկա այն պատասխանները, թե իրենք այդ մասին տեղյակ չեն ու ոչ ոք իրենց այդ մասին չի ասել: Մասնավորաբար

պարզվեց, որ այն բոլոր մասնագիտություններում, որտեղ Մասնագիտական ներածություն դասընթացը ընդգրկված է, փորձագետները ճշգրտորեն խոստովանել են դրա առկայությունը և՛ հակառակը, ասվել է նման դասընթացի բացակայության մասին այնտեղ, որտեղ ուսումնական պլաններում իրոք այն բացակայում է: Այդուհանդերձ, թեկուզ կցկտուր, մի մասը **մասնագիտության մասին պատկերացումները** ձևավորել է դեռևս դպրոցական հասակում (ինքնուրույն, ծնողների կամ մանկավարժների կողմից, երբեմն՝ դպրոց այցելած մասնաճյուղի մասնագետների միջոցով), մյուսը՝ մասնաճյուղում (համապատասխան դասընթացի, կամ առանձին դասախոսների միջոցով): Եղան նաև խոստովանություններ, թե իրենց ժամանակին ֆակուլտետի ու մասնագիտական ամբիոնի պատասխանատուները, ՄԿՈԱ բաժնի մասնագետները տարբեր հանդիպումների ժամանակ տեղեկացրել են, պարզաբանել նրա կարևորությունը, սակայն իրենց պասիվության ու ալարկոտության պատճառով մնացել են անտեղյակ այն դեպքում, երբ նման քննարկումների ընթացքում նորովի են բացահայտում խնդրի կարևորությունը իրենց ապագա աշխատանքի ու կարիերայի տեսանկյունից: Եղան նաև փորձագետներ, որոնք ուսումնական պլանը շփոթում էին ուսումնական տարվա առարկայացանկի հետ, ինչ իրենց մատուցվել էր ֆակուլտետի պատասխանատուների կողմից դասերը սկսվելու օրերին (Տնտեսագիտականում): Այս ամենը թույլ է տալիս կատարել միջանկյալ հետևություն այն մասին, թե «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի կայացման ներկա գործընթացներում կարևորվում է բոլոր մասնագիտությունների համար ուսումնական պլաններում «Մասնագիտական ներածություն» դասընթացի ներառման հարցի քննարկումը, ինչպես նաև լրացուցիչ այն միջոցառումների պլանավորումն ու իրագործումը, որն ապահովի մասնագիտության բնույթի, նրա աշխատանքային հնարավորությունների լիարժեք իմացությունը բոլոր ուսանողների կողմից: Դրան զուգահեռ՝ ուսումնառության սկզբից ուսանողներին հիմնավորումն ու համոզումը այն մասին, թե ուսումնական պլաններն ապահովում են ներկա շուկայական պահանջների համապատասխան գիտելիքների ու հմտությունների տիրապետումը: Վերջինիս կարևորությունը հատկապես դրսևորվեց առարկայացանկի վերաբերյալ բանավեճի ընթացքում:

6. Չնայած ինքնաքննադատական որոշակի խոստովանություններին, երբեմնի անլիարժեք իրազեկության փաստերին մեր փորձագետները շատ ավելի ակտիվ ու շահախնդիր էին **առարկայացանկի, առարկայական ծրագրերի թեմատիկայի արդյունավետության վերաբերյալ** քննարկումներում: Այստեղ հնչեցին համեմատաբար ավելի շատ տարբեր, երբեմն տրամագծորեն հակադիր կարծիքներ, ըստ որում ոչ միայն տարբեր, այլ նաև նույն մասնագիտության տարբեր ուսանողների կողմից: Հետադարձ հայացք գցելով անցած առարկաներին մեր փորձագետների մոտ տպավորություն է ձևավորվել, թե որոշ առարկաներ «ավելորդ» են: Համենայն դեպս, դրանց անհրաժեշտության վերաբերյալ փաստարկներն իրենց համար համոզեցուցիչ չեն եղել:

Ինֆորմատիկները կարծում են, որ ապագա մանկավարժական գործունեության համար ավելի օգտակար կլինեն Գործնական հոգեբանություն առարկան՝ «Փիլիսոփայության», «Քաղաքացիական պաշտպանության», «Հայոց լեզվի» դասաժամերի (կամ դրանց մի մասի) հաշվին: Նրանք համարում էին, որ ոչ մասնագիտական առարկաներից գիտելիքներն ավելի ճիշտ է ստուգել բանավոր հարցման օգնությամբ:

Պատմաբանները գտնում են, որ «Ասիա-Աֆրիկյան երկրների պատմությունը», «Բնագիտության ժամանակակից հայեցակարգերը» առարկաների կարևորությունը իրենց համար համոզեցուցիչ չէ: Դրանց փոխարեն իրենք կնախընտրեին ավելի շատ քաղաքացիական և մանկավարժական գիտելիքներ:

Օտար լեզվի մասնագետ-ուսանողների համար համոզեցուցիչ չեն տարբեր անվանումներով, սակայն գործնականում նույն բնույթի ու թեմատիկայի հաճախակի կրկնությամբ առարկաների օգտակարությունը ուսումնական պլաններում («Հայոց լեզու և գրականություն», «Գրականագիտություն», «Հայ հին ու նոր գրականություն», «Նորագույն գրականություն»): Փաստվեց, որ, իբրև 3-րդ կուրսում անցած «Արտասահմանյան գրականության» և առաջին կուրսի «Գրականագիտության» առարկայական ծրագրերն ունեն մեծ ընդհանրություն: Ցանկություն հնչեց, որ այն անցկացվի անգլերեն լեզվով: Ավելին, փորձագետներից մեկը կարծիք հայտնեց այն մասին, թե ավելի օգտակար է այդ գրականությունը պատասխանեն անգլերեն լեզվով, ինչին ընդդիմացան մյուս փորձագետները, փաստելով, որ ուսանողների գերակշիռ մասը լեզվին չի տիրապետում այն չափով, որ կարողանա նվազագույն պահանջներին բավարարել և դա կարող է վնասել ընդհանուր գործին: Խնդիր է նաև այն, թե կուրսային, ավարտական աշխատանքները որ լեզվով կատարվի:

Տնտեսագետ փորձագետների համար ավելորդ առարկաներ չկան, սակայն գոյություն ունի առարկայական ծրագրերի հստակության ու օգտակարության խնդիր: Այդպիսին էր համարվում Հայոց լեզվի առարկայական ծրագիրը, որը երկու փորձագետի համար դպրոցական ծրագրի կրկնությունն է, կամ՝ «Քաղաքացիական պաշտպանությունը»: Գերադասելի է նաև առարկայական ծրագրերի վերանայումը, դասաժամերի հնարավոր նվազեցումը, և՛ այդ դասաժամերի հաշվին ավելի խորը օտար լեզվի ուսումնասիրությունը, մասնագիտական դասաժամերի ավելացումը (օրինակ՝ «Ֆինանսներ»):

Կիրառական արվեստի ֆակուլտետի մասնագիտությունների փորձագետների մի մասը (երեք փորձագետ) իրենց մասնագիտական որակների ձևավորման մեջ գրեթե չեն կարևորում այն առարկաների դասավանդումը, որոնք կրկնում են դպրոցում անցածը (օրինակ՝ Հայոց լեզու, Պատմություն): Մյուս կողմից գտնում են, որ պետք է վերանայվի մասնագիտական և ոչ մասնագիտական առարկաների ժամաքանակը՝ ի օգուտ մասնագիտականի: Այդպես է մտածում չորս փորձագետ: Երկու ուսանողի կարծիքով

նման տպավորությունն ավելի շատ արդյունք է որոշակի դասախոսի մատուցման մշակույթի, քան՝ առարկայական բովանդակության: Այսինքն դասախոսը չի կարողանում համոզեցուցիչ լինել մատուցված գիտելիքների կամ հմտությունների օգտակարության հարցում:

Բոլոր դեպքերում տվյալ հարցերի քննարկումը թույլ է տալիս կատարել ընդհանուր հետևություն, որը թերևս լիովին համահունչ է «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ինստիտուտի առջև դրված խնդիրներին, այն է. մասնաճյուղի բարձր կուրսի ուսանող-փորձագետների կարծիքով **մասնագիտությունների ուսումնական պլաններում առկա են կրկնվող առարկաներ, կրկնվող թմաներ, կրկնվող բովանդակություններ մի կողմից, և մյուս կողմից՝ կարևորվող ընդհանուր կրթական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների մատուցման պակաս:** Հարցեր, որոնք կարիք ունեն մանրակրկիտ մասնագիտական ու կազմակերպչական զննման, դրանց հիմնավորման դեպքում առկա հնարավորություններով լուծելու միջոցների որոնման ու հայտնաբերման:

7. «Ֆոկուս-խմբերի» հետ քննարկումներում թերևս ամենաբուռն և երկարատև ուսուցման արդյունավետության մեջ **դասախոսի անձի և ուսանողների ու դասախոսների միջանձնային հարաբերությունների դերի մասին** բանավեճն էր: Ստեղծված բարենպաստ մթնոլորտը թույլ էր տալիս ուսանողներին անկեղծորեն արտահայտվել, դրսևորել նաև ինքնաքննադատություն: Առանձին դեպքերում առկա էր նաև որոշակի երկչոտություն, մտավախություն, երևույթն անձից ջոկելու անկարողություն, սակայն ավելի շատ գերիշխում էր անկաշկանդության և օբյեկտիվության մթնոլորտը: Այն աստիճան, որ տարբեր մասնագիտությունների փորձագետների մի մասը, իրենց գնահատականներն ու որակումները հիմնավորում էին կոնկրետ փաստերով ու օրինակներով: Ելնելով ծառայական, մասնագիտական ու ոչ պաշտոնական էթիկայի պահանջներից՝ այն է, չվնասել որևէ դասախոսի կամ ուսանողի անձը, չշփոթել երևույթը անձնավորության հետ, սուբյեկտիվ կարծիքը անարդարացիորեն չօբյեկտիվացնել, ձեռնպահ ենք մնում անձանց ու ստորաբաժանումների անվանումներ նշելուց: Ի վերջո դա սոցիոլոգի խնդիրը չէ և սոցիոլոգիան գործ ունի զուտ հատկանիշների, այլ ոչ թե անձանց հետ: Այդ պատճառով մենք ընդհանրական տեսքով ներկայացնում ենք այն որակներն ու մոտեցումները, որոնք, ըստ մեր փորձագետների օժանդակում կամ խոչընդոտում են մատուցվող նյութի յուրացմանը, հմտությունների ձեռքբերմանը:

7.1. Նախ ուսանողները միահամուռ էին այն կարծիքի մեջ, թե մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կողքին **դասախոսի անձնային ու մանկավարժական հատկանիշներն ուսուցման արդյունավետության կարևոր գործոն են:** Առանց սրբագրելու, ընդամենը խմբագրված ու իմաստավորված մեջբերենք փորձագետների կարծիք-գնահատականները սույն հարցերի վերաբերյալ:

Բացասական ազդեցություն.

- կան դասախոսներ, որոնք «չեն սիրում» հարց տվող ուսանողներին;
- չեն կարողանում լսարանում պահպանել պատշաճ կարգապահություն;
- իրենց ուսումնական պահանջները բավարարում ենք, բայց միևնույն է, ցածր են գնահատում (օրինակ, անհեթեթ է, երբ լսում ենք դասախոսից՝ ինպես ուզում եք պատասխանեք, ես 14-ից բարձր չեմ նշանակում);
- ուրիշի վրա նեղանում, գալիս են զայրույթը մեզ վրա «կոտորում»;
- արտագրողներն ու չարտագրողները նույն գնահատականն են ստանում;
- կան ուսանողներին ծաղրող դասախոսներ;
- աղջիկների մոտ վիրավորում են տղաներին;
- դասից դուրս մեզ արհամարհաբար են վերաբերվում («մարդու տեղ չեն դնում»);
- դասախոսը պետք է կարելվույն լինի իր ճշմարտությունների մարմնավորումը (օրինակ, բարի հումորով հիշատակեց փորձագետներից մեկը. մի դասախոս մեզ ներշնչում էր, թե պետք է ձեռքդ կուրորեն տանես պայուսակիդ մեջ ու ուզածդ վերցնես, բայց այդ պահին երբ հեռախոսը զանգեց, սկսեց այն գրպաններում տենդագին որոնել);
- չափից ավել շեղվում են նյութից, ուրիշ թեմաներից են խոսում այն դեպքում, երբ չենք հասկացել առարկայի իմաստը;
- արագ են բացատրում, չենք հասցնում հասկանալ;
- գիրքը դնում է դեմը ու սկսում է կարդալ;
- որևէ հարցի պատասխանը չիմանալուց վիրավորում է չիմացողի անձը;
- քննության ժամանակ «կերպարանափոխվում են»՝ դառնում «դաժան», «չար» (ավելորդ անզիջումություն);
- որոշ հրավիրված դասախոսներ մեր հանդեպ վերաբերվում են «խորթի», «օտարի» նման;
- առարկայի էությունը վատ է ըմբռնում ու կարծես ժամանակ է սպանում;
- կոպտությունը, բռնությունը ունենում է սպանիչ ազդեցություն (նման դասախոս ունեցել ենք, փառք աստծո հիմա չունենք);
- անձնական կյանքից ավելորդ մանրամասներ է պատմում;
- արհամարում է ուսանողների կարծիքը;
- կոկիկ չէ:

Դրական ազդեցություն.

- կարողանում են առարկայի էությունը զգացնել տալ, համառորեն միտքը հասցնում են ուսանողին;
- դրսևորում են սկզբունքայնություն և ինքնուրույնություն;
- հարգալից են վերաբերվում ցանկացած ուսանողի անձի հանդեպ;
- բանականության շրջանակներում բարի են ու անկեղծ ուսանողների հետ;

- հնարավորինս նաև ունենում ենք մասնագիտական արտալսարանային շփումներ;

- որքան հնարավոր է ընդունում և իրագործում է ուսման ու ժամանցի վերաբերյալ մեր առաջարկությունները;

- իր նկարագրով, շարժ ու ձևով համակրանք է առաջացնում առարկայի հանդեպ;

- բարեհոգի, պարկեշտ, անձնապես հարազատացած դասախոսի դասերին միշտ հաճույքով ենք հաճախում, եթե նույնիսկ սկզբնական շրջանում «բան չենք հասկանում» (երբ դասախոսին սիրում են, առարկան էլ են սիրում);

- դասախոսին սիրում են, երբ առարկային տիրապետելուց բացի ուսանողների հանդեպ ցուցաբերում է անհատական մոտեցում, կարողանում է սփռփել նրանց, հուսադրել;

- այն դասախոսի դասերին ենք ավելի հաճույքով մասնակցում և լավ արդյունքներ ցույց տալիս, որոնց դասերին չենք ձանձրանում, դասը նաև «հումորով» է անցկացնում, բարդ երևույթների մասին խոսում է պարզ, մատչելի լեզվով:

Եթե փորձենք սավաճը ընդհանրացնել, կարող ենք փաստել, որ մասնաճյուղի ուսանողության հասարակական գիտակցության մեջ դասախոսի անձը կրթության արդյունավետության կարևոր գործոն է. խթանիչ ուժ, որի դերը առօրյա դասախոսական կյանքում, շատ դեպքերում թերագնահատվում է: Ընդ որում ուսանողների մոտ գոյություն ունեն որոշակի կարծրատիպեր «լավ» և «վատ» դասախոսների վերաբերյալ, կապված նրանց մանկավարժական ու մարդկայնության որակների հետ: Ըստ այդմ, «լավ» դասախոսները, որոնք առարկայական ծրագրին լիարժեքորեն տիրապետելու կողքին կարողանում են պատշաճ մակարդակի վրա պահել լսարանի բարոյա-հոգեբանական մթնոլորտը, ստեղծել փոխադարձ հարգանքի, գիտելիքի հանդեպ անբռնազբոս հետաքրքրության, անձնական կյանքում կրթվածության կարևորության գիտակցման հոգեվիճակ, ծրագրի ավարտին շատ ավելի մեծ հավանականությամբ են ստանում անհրաժեշտ այն վերջնարդյունքները, որոնք նախանշվում են «Մասնագիտության կրթական ծրագրում»:

7.2. Թեկուզև համեմատաբար պակաս չափով, բայց ուսուցման արդյունավետության հարցում մեր փորձագետները կարևորում են նաև սուբյեկտիվ միջանձնային հարաբերությունները միմյանց միջև: Երբ փորձում ենք ընդհանրացնել տվյալ հարցի քննարկումներից ստացած տպավորությունները, կարևորվում են հետևյալ պահերը.

- ուսանողների հասարակական գիտակցության մեջ նկատվում է ինքնաքննադատության «դեֆիցիտ», ավելի մեծ հակվածություն ընդհանուր կյանքի թերացումներն առավելապես վերագրել ուսանողական սոցիալական միջավայրից դուրս հանգամանքներին, ամենաքիչը՝ նեղ միջավայրին (մասնագիտական խմբին կամ

անձնական ոչ պաշտոնական մտերմիկ շրջապատին): Այն, ինչ թերևս կարելի է անվանել «խմբային էգոիզմ»;

- մասնագիտությունների մեծ մասում խմբային մակարդակում ուսանողների միջանձնային հարաբերություններն ունեն բնականոն, խթանիչ բնույթ և ամենաքիչն են խանգարում ուսուցմանը;

- այդուհանդերձ, շրջափոխման սկզբունքը, արտալսարանային միջանձնային հարաբերությունները (ծնողների, բարեկամ-ծանոթների միջամտության դեպքերը, անձնական համակրանք-հակակրանքը և այլն), չսովորող կամ վատ սովորող ուսանողների բացասական հոգեբանական ազդեցությունը (հատկապես այս հանգամանքը ընդգծվեց օտար լեզուների մասնագիտությունների փորձագետների կողմից) որոշակի իմաստով ու չափերով «փչացնում է» մթնոլորտը, երբեմն ձևավորում փոխադարձ դժգոհություն, անարդարության զգացողություն: Այն հատկապես բացասաբար է ազդում ուսուցման վրա, երբ վեր է ածվում փոխադարձ թշնամության: Սակայն խոստովանվեց, որ նման դեպքերը հազվադեպ են:

Որպես փաստ նշվեց, որ դինամիկայի մեջ աստիճանաբար միջանձնային հարաբերություններում «խորդուբորդությունները» ավելի արագ են հարթվում: Այն ունի նաև տարածաշրջանային բաղադրատարր. սկզբնական շրջանում, երբ շրջափոխման սկզբունքը նոր ներմուծվեց, մի շարք թշնամական դեպքերը շատերի մոտ ամոթի զգացողություն առաջացրին և հետագայում իրենց թույլ չտվեցին այդ աստիճան գերազնահատել երևույթը (բնականաբար մասնաճյուղում ընտանիքների ու գերդաստանների մակարդակով ուսանողների ծանոթությունը, մտերմությունը, ազգակցական ու արյունակցական փոխկապվածությունը ավելի մեծ է, քան մայրաքաղաքի բուհերում, ինչը տվյալ հարցում կատարում է զսպիչ ու կարգավորիչ դեր):

8. Եվ վերջապես նշենք փորձագետների կարծիք-գնահատականներն այն մասին, թե մասնաճյուղում ինչն է լավ, օգտակար, հաճելի, և, ինչը կցանկանային որ բարելավվեր, փոխվեր: Քանի որ այն վերաբերվում է ողջ մասնաճյուղին, մեր տեսանկյունից տարբեր մասնագիտությունների փորձագետներին առանձին նշելը կարևոր չէ: Գիտակացաբար տարբեր երևույթների նմանատիպ կարծիքները չեն ընդհանրացվել, այլ կրկնվել են, քանի որ դա էլ ընդհանուր գնահատականի տարբերակ է:

Դրականը.

- կարգ ու կանոնը, կարգապահության պատշաճ դրվածքը
- կրթության կազմակերպման և դասախոսների պատասխանատվության մակարդակը;

- գրադարանի անձնակազմի հոգատարությունը, համբերատարությունը, օգնելու պատրաստակամությունը;
- գրադարանի ապահովվածությունը;
- ղեկավարությունը հարգում է մեր կարծիքը;
- սանիտարա-հիգիենիկ վիճակը, արտաքին միջավայրը;
- աշխատակազմը, դասախոսական կազմը;
- նոր ընկերական շրջապատ, մարդկանց ավելի լավ ենք ճանաչում;
- խելամիտ, բարի, պարկեշտ դասախոսների հետ հաղորդակցվելը;
- մայրաքաղաքի բարձր մակարդակի մասնագետների առկայությունը;
- հրավիրված լավ մասնագետները, լավ դասախոսները ֆակուլտետում ,
- բարեկարգ բակը;
- մասնաճյուղի կառավարման ոճը;
- զեղչերը;
- բնակավայրին մոտ լինելը;
- վարձի մատչելիությունը:

Ցանկալի է բարելավել, փոխել.

- Չլինեն ուսանողներ, «որոնք ուսանող չեն»;
- ուսանողական տոմս ունենանք, ամեն մարդ չմտնի;
- իրապես ապահովել հարցումների անանունությունը;
- ներկա-բացակա չարվի, բացակաները չստուգեն, կամ նրանց պատճառով չմեղադրեն ներկաներին;
- անցնենք ավելի քիչ առարկաներ, ավելի տարողունակ ու օգտակար ծրագրերով;
- ավելի բարելավել զեղչերի և լուծարքների կապը (ի՞նչ է նշանակում. Գիտեմ որ գիտես, բայց եթե բարձր նշանակեմ, կզեղչվես, որը «չի կարելի»);
- նպաստել աշխատանքի ընդունվելուն;
- օնլայն լսարանը ծառայի իր նպատակին;
- լսարաններում լինեն կախիչներ;
- դասախոսների միջև կոնֆլիկտները հաղթահարվեն, քանի որ այն բացասաբար է ազդում մեզ վրա;
- մեր մասնաշենքում էլ լինի առաջին բուժ. օգնություն, զուգարան (հայելի), ուրիշ խոսքով խտրություն չլինի մեր հանդեպ;
- ունենանք դասախոսներին ընտրելու ավելի լայն հնարավորություն;
- քննությունների ժամանակ դասերի առկայությունը խանգարիչ հանգամանք է;
- պետք է վերանայվի որոշակի ոչ մասնագիտական առարկաների կարգավիճակը;
- չորրորդ կուրսի ծրագրերը շատ բարդ են;
- ապահովվի ուսանողների փոխանակություն ուրիշ բուհերի հետ;

- բնագիտական ավելի ակտիվ լինի, ուսանողությունը կարողանա Իջևանի կյանքը ավելի հետաքրքիր դարձնի:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը կարող ենք ասել հետևյալը.

- Մասնաճյուղի բոլոր մասնագիտությունների ներկայացուցիչներից կազմված «ֆոկուս-խմբերի» հետ ուսման կազմակերպման տարբեր խնդիրներին նվիրված քննարկումները հավաստեցին, որ ուսանողության հասարակական գիտակցության մեջ կրթօջախը կառավարվում է հմուտ ու բարեխիղճ ղեկավարության կողմից, ուսուցման գործընթացն իրագործվում է արհեստավարժ պրոֆեսորա-դասախոսական ու սպասարկող անձնակազմի կողմից, ինչի արդյունքում իրենք ձեռք են բերում պատշաճ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ:

- «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ինստիտուտի ներմուծումը օբյեկտիվորեն պահանջում է ուսման գործընթացներին ուսանողության ավելի ակտիվ ու նորովի մասնակցություն, որի պատճառով արդիական ու հրատապ են դառնում այնպիսի երևույթների հանդեպ կառավարչական ու մասնագիտական ավելի մեծ ուշադրությունը, ինչպիսիք են մասնագիտական կողմնորոշումը, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի վերաբերյալ ժամանակին ու լիարժեք իրազեկվածությունը, դասախոսի անձնային որակների ու ուսանող-ուսանող, դասախոս-ուսանող պաշտոնական ու ոչ պաշտոնական հարաբերությունների հանդեպ ավելի մեծ ուշադրությունը;

- Վերահաստատվեցին նախորդ հարցումներից ստացված վիճակագրական այն հետևությունները, թե կրթօջախում իրագործվող ներկայիս բարեփոխումների ֆոնին ավելի է կարևորվում մի շարք կառույցների գործունեությունը (Ուսանողական խորհուրդ, Կարիերայի կենտրոն, Ուսանողների իրավունքները պաշտպանող հանձնաժողով), որի վերաբերյալ փորձագետները դրսևորեցին լիարժեք իրազեկության պակաս;

- Ուսանողության, հատկապես նրա առաջադիմող ու շահախնդիր հատվածի համար հրատապ են մնում պրակտիկաների անցկացման վայրերի, ժամանակահատվածի հարմարության ու արդյունավետության, պրակտիկայի վայրում իրենց վարժվելու ու հմտանալու հանդեպ պատասխանատուների պատշաճ վերաբերմունքի հարցերը;

- Փորձագետների գերակշիռ մասը գտնում է, որ դասախոսի անձնական ցանկալի որակները և ուսանողների միջանձնային ոչ պաշտոնական հարաբերությունները գիտելիքների արդյունավետ յուրացման վրա դրականորեն ազդող բարոյա-հոգեբանական ուժ են այն դեպքում, երբ մի շարք հանգամանքներում մասնաճյուղում ուսանողներն ունենում են խնդիրներ:

Ասվածք թույլ է տալիս կատարել որոշակի առաջարկներ.

- Յուրաքանչյուր մասնագիտության պատասխանատուների (ֆակուլտետի, ամբիոնի ներկայացուցիչ, «Կրթական ծրագրի պատասխանատու») հետ քննարկել տվյալ մասնագիտության փորձագետների հետ անցկացված հարցազրույցների արդյունքները, դիտարկել ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի, ոչ մասնագիտական առարկաների կարգավիճակի ճշգրտման ու ուսման սկզբից ուսանողության իրազեկման մակարդակի բարձրացման հնարավորությունները:

- Ուսումնամեթոդական վարչության հետ քննարկել պրակտիկաների ու գնահատման համակարգի վերաբերյալ ուսանողների ցանկությունների իրագործման հնարավորությունները;

- Կարիերայի կենտրոնի, Ուսանողական խորհրդի ներկայացուցիչների հետ մշակել մեխանիզմներ, տվյալ ծառայությունների գործունեության ու հնարավորությունների վերաբերյալ ուսանողության իրազեկության և այդ կառույցների հետ համագործակցության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

- Քննարկված մի շարք հարցերի (դասախոսների անձնային որակներ, ուսանողների միջանձնային հարաբերություններ, ոչ մասնագիտական առարկաների կարգավիճակ) վերաբերյալ ստացված պատասխանների ընդհանրացումները տեղադրել մասնաճյուղի էլեկտրոնային կայք-էջում:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին